



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱՆՈՒՄԱԾ ԵՒ ԲԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն անգի համար ուր այս լրագրի մուտքը որդիուած չէ, ամբողջ 18րդ շրջանի (902 նոյ. — 903 օգոստ.) բաժնորդագրին է 20 Փր. կան. թիկ, կարելի է նաև բաժնորդագրուել քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2 Փր. հաշուելով և 1903 օգոստոս ամսին անդին չանցելու պայմանով:

Նամակ և ծրարագէտք է զրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal Arménia, MARSEILLE (France).

ԺԸ ՏԱՐԻ ԹԻԻ 17

1903 ՓԵՏՐՈՒԱՐ 25
1903 ՓԵՏՐՈՒԱՐ 12 (2. Յ.)

ՅՈՐԵՆԵԱՐՈՒ

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կոմսամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերագործունել չհրատարակուած ձեռագիրները: Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Ծանուցման միջակայքը 1 ամսի ընթացքով է. 1 զիտագիրը 2 ամսի ընթացքով է: Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction: Rue Beaumont, 9.

ԲՈՎԱՆ ԳՈՒԿՈՒԹԻՒՆ

Քոթոքի ճայն մը Ամերիկայի Միացեալ Նահանգներին. — Սպանոսքեան փարձ Ա. Արիիարեանի վրայ. — Ազգային հաստատարիւններին նպատակը բարեբարութիւն. — Նոր հրատարակութիւններ. — Թիֆլիզի ոռոս եւ հայ բերքերի հրատարակիչները. — Նուիրատուութիւն. — Անգլիացիներն Արաբիայի մէջ. — Մակեդոնական լուրեր. — Արտասանմանի լուրեր. — Ծանուցումներ:

ԲՈՂՈՒԹԻ ԶԱՅՆ ՄԸ

ԱՄԵՐԻԿԱԻ ՄԻԱՅՆԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Սիւթըլ, 25 յնր. 1903

(Շար. 16րդ բուհն)

Չգիտեմ թէ Չեզոքներն ինչո՞ւ թերթ չեն հրատարակեր. այս կէտը խնդրոյ նիւթ եղած մեր կէտերէն գուրս հարցում մ'է, որուն կը պատասխանենք թէ հաւանական է որ Չեզոքները չեն փափաքիր արդէն գոյութիւն ունեցած խել մը կուսակցական թերթերու վրայ ուրիշ յաւելում մ'ընել և այսպէս կուսակցական քառսի չենքին վրայ կըլինար մ'ալ յաւելուլ: Բաց աստի, կան քանի մը հին թերթեր որոնք գրէթէ 15 տարիէ ի վեր առաւել կամ նուազ Չեզոքներու որդեգրած գաղափարները կը ներկայացնեն:

«Չայն» նոյնպէս կը յարէ թէ «Եթէ Ամերիկայի մէջ կուսակցական գործունէութիւնն զնստակար է, պէտք է ոչ կուսակցականք կազմակերպուին և ջախջախեն զնստակար մարմինները. իսկ եթէ օգտակար է, պէտք է միանան անոնց»: Ամերիկայի մէջ կուսակցական գործունէութիւնը զնստակար չէ. ընդհակառակը, թէ' նիւթապէս և թէ' բարոյապէս յոյժ օգտաւէտ. բայց տարբեր տարբեր ուղղութիւններու հետևող կուսակցութիւններու տարբեր տարբեր եղանակաւ վարած գործունէութիւններն ո'չ միայն Միութեան ոգւոյն զնստակար են, այլ յեղափոխական մարմիններու ոյժերը կը շնորհակցեն, զի մենք, իբրև փոքրթիւ մի յետաձուց ազգ, ընդունակութիւն չունինք մեր մէջ ուրոյն ուրոյն հատուածներ սնուցանելու: Յարանուանութիւններ մեր ազգին մէջ մուտ գտած առաջին օրէն Միութեան ոգին ի հիմանց խախտած են. այսպէս և տարբեր տարբեր կուսակցութիւններ ոյն օրէն երբ մուտ գտան մեր մէջ, ճշմարիտ Յեզոքներու հոգւոյն մեծ հարուած մը տուին: Չեզոքները արդէն գոյութիւն ունեցող կուսակցութիւններու վրայ ուրիշ մ'ալ չեն ուզեր աւելցնել և ոչ ալ իրենց նպատակը «մարմիններ ջախջախել» է, այլ երկու ընդդիմական տարբերութիւն ի մի խմորուելով Ազգին մէջ կեզոք նական մեծ Միութեան մը զօրութիւնն ի գոյութիւն բերելու համար

եղած պայքարի տեսարանին (spectacle) հանդիսատեսներ են և իրենց անձնական դատողութենէն կախում ունի թէ ո՞ր կողմն իրենց գաղափարներուն մօտ և Ազգին ընդհանուր օգտին նպաստաւոր է: Երբ հակառակ գուժարտակներ իրարու դէմ հուր ու բոց կը տեղան, Չեզոքը միայն կընայ դիտել ու սպասել որ տաք գլուխները քիչ մը զովանան և իրենց ունի ու ուրուզ դարձնեն դէպի կէտ նպատակին, այն է Միութեան խընդիրը: Եթէ այս իրարանցումին մէջ խառնուի, հաւանական է որ տփոցին մէկ մասը ինքն ուտէ, Հնչակեանը կը պարսաւէ Չեզոքը. ինչո՞ւ. որովհետև Հնչակեան չէ: Դրօշակեանը կը պատարակէ Չեզոքը. ինչո՞ւ. որովհետև Դրօշակեան չէ: Խեզը Չեզոքը երկու սրի մէջն է մնացած. ո՞ր կողմը դառնայ կապտակեն զինք. այլ սակայն երկու կողման ժողովներն ալ առանց Չեզոքի չեն կարող լինել և կը ջանան անոնց մեծամասնութեան ներկայութիւնը վայելել և իրենց սեպհական կուսակցութեան վսեմ խորհուրդներն անոնց բացատրել: Այլ եթէ, Աստուած մի' արասցէ, Չեզոքը համարձակի Դրօշակի կամ Հնչակի գաղափարներէն տարբերել, երկուստեք այնպիսի խոցոտիչ հարուածներով կը գանակոծեն զինքն որ մարդ կը զարմանայ թէ միևնոյն ցեղի, միևնոյն արին կրող սերունդի պատկանող անհատներ են, թէ ոչ իրարմէ հեռու ու թշնամի ախոյաններ:

Այդ հարուածներու սքանչելի նըմոյններէն մին միւս օր չկրցաւ մեր ուշադրութենէն վրիպել: «Չայն» ի 162 թուին մէջ հնչակեան հանդէսի մ'առթիւ ճարտասան պարոն մը նըմանցուցած է Չեզոքները «նիւթութիւն միայն արտադրելու սահմանուած մի տաժանելի քանակութեամբ լծացած ջրի»: Կիմանա՞ք, պարոն Չեզոքներ, և դո՞ւք, անկողմնակալ կուսակցականք, մեր այս հետտորին ճարտասանութեան ալլարանական զարդարուն մէկ ոճովն համեմատ այս գարշելի հայհոյութիւնը. ո՞ր Չեզոքին ու անկողմնակալ հայրենասէր Հայու մը հոտոտելիաց զգայարանքը պիտի կընայ հանգուրժել այդ բոյրին և ո՞ր ստամոքս պիտի կընայ մարսել այս համով հոտով պատրաստուած գրական խորտիկը: Եթէ Հայ կա-

նայք արդար բողոք մը յարուցին կուսակցական խմբագրի մը իրենց անարատ պատիւը աղարտելուն դէմ, ո՞չ նուազ իրաւունք ունին ամեն ինքնազգած Չեզոքներ և լուրը Հայեր բողոք բառնալու և չընդունելու այսպիսի լպիրշ նմանութիւններ, որոնք, ցաւալի է դիտել, կուսակցական գլխաւոր աղբիւրներէ կը տեղան ընդհանրապէս և մանաւանդ արձակ համարձակ հրատարակագրութեամբ:

Մի' զուցէ վերոյիշյալ հանդէսին ներկայ դանուղ Չեզոքներու «նիւթութիւն միայն արտադրելու սահմանուած տաժանելի քանակութեամբ լծացած ջրը» սոյն բնութագրող Պարոնին ունեցն ու քիմքն ողողէ. վասն որոյ զգոյշ պէտք է գտնուի որ իր հոտոտելիաց այդ դիւրապատ զգալարանքն չի նիւթահոտի: «Չայն» իւր մէկ թուին մէջ իբրև պատասխան թղթակցի մը՝ կը յարէ թէ «Չեզոքներու գրածին կարևորութիւն չենք տար» և այլն: Ետտ լաւ. եթէ Չեզոքներն այնչափ անկարևոր դաս մը կը կազմեն, ինչո՞ւ թէ' Դրօշակեանք և թէ' Հնչակեանք նախանձախնդիր կըլլան որ իրենց ժողովները Չեզոքներով լեցունին: Չեզոքները քանի որ այսօր Ազգին մէջ բաւական մեծ տարր մը կը կազմեն, իրենց մտածումներն ու գաղափարներն ալ պարտին յարգուել և ուշադրութեան առնուել, զի առանց անոնց ո՞չ մէկ կուսակցութիւն պիտի կընայ կատարեալ մարմին մ'ըլլալ և մեծամասնութիւն ստանալ: Չեզոքներն ինչ մահացու մեղք են գործած որ այսպէս մինչև «նիւթացեալ լծելու» եզերքն կը քշեն և անոնց գրածն ու ըսածն ալ «անկարևոր» ու «անպէտ» կը համարին, միւս կողմանէ ալ ժողովներու կը հրաւիրեն: Ինչ հակասութիւն և միանգամայն ինչ կեղծաւորութիւն Ամերիկացի մը կընայ իւր հայրենիքին համար արիւն թափել և միևնոյն ատեն ոչ Հասարակապետական և ոչ ալ Տէմոքրատիկան ըլլալ, բայց Ամերիկացի թերթեր ու բնութագրներ, ոչ թէ միայն այդպիսի ազնիւ անձ մը անկարևոր չեն համարեր ու «նիւթացեալ լրոց» մէջ չեն նետեր, այլ կը ներկայացնեն կատարեալ ընկերասիրութեան (Altruism) ու հայրենասիրութեան տիպար մը զօր հայրենիքն իւր անձէն աւելի սիրելուն

ԲԱՅՈՒԱԾ ԵՒ ԲԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
"ԱՐՄԵՆԻԱ" Ի
ԺԸ ՇՐՋԱՆԻՆ
1902 ՆՈՅԵՄԲԵՐ-1903 ՕԳՈՍՏՈՍ

18րդ շրջանի բաժնորդագրութիւնը սկսի 1902 նոյեմբերէն և կը տեւէ մինչև 1903 օգոստոսի վերջը: Ամբողջ 18րդ շրջանի բաժնորդագրին է 20 Փրանգ կ'ԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԻԿ: Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամսականը 2 Փրանգ հաշուելով:

Անանք որ ԱՐՄԵՆԻԱԻ ՕԺԱՆԴԱԿ կը գրուին մեր հրատարակած Օժանդակութեան կանոնագրի համեմատ կատարելով իրենց պարտականութիւն, իրաւունք կ'ունենան, իրենց ստացած 1 օրինակ Արմենիայէն զատ — որի համար ամբողջ բաժնորդագրին 20 Փր. պէտք է վճարեն —, քանի' անձի համար որ ուզուի, Արմենիա բերել տալու իրենց ստացած լրագրի ծրարին մէջ գրուելով և կէս բաժնորդագրով, այսինքն՝ ամբողջ շրջանին համար 10 Փր.ով և կամ ամսական 1 Փր.ով: Ցանկացողին կը զրկենք «Արմենիայի Օժանդակութեան» համար մեր հրատարակած կանոնագիրը:

Բ. Ժնոդագրիներ կանխիկ վճար մը մեծ դիւրութիւններ կընձայէ թերթի կանոնաւոր ընթացքին և յայտնի է որ Եւրոպայի և Ամերիկայի մէջ ամէն ազգեք սովորութիւն ունին իրենց ստացած լրագրի բաժնորդագրինը կանխիկ զրկելու. անոր համար իրենց լրագրիներ ալ կընան կանոնաւոր ընթացք մ'ունենալ:

համար «Հերոս» անունով կանամահացնեն: Վանի հերոս անամահացնեն և ոչ ալ Հնչակեան էր, բայց օրինակելի քաջութեամբ մը ցոյց տուաւ թէ Հայ մը առանց Դրօշակեան կամ Հնչակեան ըլլալու կրնայ իր սիրուն հայրենիքին համար արիւն թափել և ո՞ր Հայը կրնայ համարձակել այսօր այդ մեծ անձնաւորութեան արարքն անկարևոր համարել այսինչ կամ այնինչ կուսակցութեան չպատկանելուն համար և անոր յիշատակը մինչև «Նեխացեալ լրոց» եզերքն հալածել: Միմիայն վատագի ու ցած բնատիպ մ'զգեցող Հայ մը պիտի կրնայ յանդգնիլ այդպիսի անհերքելի յիշոցով մը բերանն ապակա ներու:

(Շարունակելի)
ԵՐՈՒԱՆԻՒՆԻՆԻ

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ

Ա. ԱՐՓԻԱՐԱՆԻ ՎՐԱՅ

Եւրոպական թերթերին եկած հեռագիրները իմացուցին թէ վենետիկ քաղաքին մէջ հայերէն թերթ մը հրատարակող հուշակաւոր հրատարակագիր Արփիար Արփիարեանի վրայ զիջերայն յարձակում մ'եղած է ըսպանելու համար և թէ այդ ոճրագործութիւն քաղաքական պատճառով է:

Կը հաւատանք թէ ամէն Հայ, Արփիարեանի գրածներին համակրող լինի կամ ոչ, եւրոպական թերթերին մէջ այդ հեռագիր կարգացած ժամանակ նողկանք ու զայրոյթ զգացած է այդպիսի գործի ոճրագործութեան մը դէմ: Արփիարեան գրչի մարդ մը լինելով, եթէ իր գրածներ սուտ կամ ճշտակարար են, կարող են իր հակառակորդներ գրչով պատասխանել և կոտորիլ անոր դէմ: Իմաստաւոր հոս թիւրքիս չէ, արտասահմանի մէջ գրելով պատասխանելու ազատութիւն կայ: Եթէ իր ընդդիմաբան սպաննելը լռեցունելու իրաւացի միջոց մը համարուի, Եւրոպայի մէջ գրագետ մարդ չմտար, ամէնքն ալ կենն իրար կը սպաննեն և այդ կերպով ոչ մտքի յառաջդիմութիւն կը լինի և ոչ ալ ճշմարտութիւնը կը յայտնուի: Իմար մէջ ալ Հնչակեաններ ու Դրօշակեաններ իրար դէմ այնչափ սոսկալի գէշ բաներ գրած են որ եթէ սպաննելը իրաւունք լինէր, իրենցմէ ոչ մէկն ալ ողջ չէր մնար այսօր: Կարծիքներ իրար դէմ ուժով չփռելէն է որ լոյս կը ցայտի և ճշմարտութիւնը կերակայ իսկ, ընդհակառակ, իր ընդդիմաբան լռեցունելու համար զարնել սպաննելը՝ անոր գրածներ հերքելու անկարողութեան փաստ մը կը համարուի ժողովրդէն:

Ամէն կերպով ցաւալի ու դատապարտելի այս ոճրի մանրամասնութիւններին և որի կողմէ սարքուած լինելուն մենք անտեղեակ լինելով և Արփիարեանի սպաննուած թէ ազատուած լինին ալ հեռագիրներին մէջ շատ որոշապէս նշանակուած չլինելով, մենք փութացինք խնդրել

վենետիկէն բարեկամէ մը որ հաճի անմիջապէս տեղեկութիւններ տալ մեզ և հաւ Արմենիայի հետաքրքիր ընթերցողներին կը ներկայացունենք ինչ որ բուն իսկ ինք Արփիարեան պատմած և կարծիք յայտնած է իրեն վրայ եղած յարձակման մասին:

«Փետրուար 14ին երկու Հայ վենետիկ քաղով, մեր տպարանէն իմ տունս տեղեկացեր ու եկեր են զիս փնտաւու: Յաջորդ օրը դարձեալ եկան: Ըսին թէ գործաւորներ են: մէկը՝ Ամերիկայէն, միւսը՝ Եգիպտոսէն: Առաջինը երկիր պիտի երթայ եղեր ու շիրնալով մտնել, ետ դարձեր է: Միւսը իր ազգականն ըլլալով միասին աւեր է և անոր հետ Յունաստանի վրայէն անցնելով վենետիկ եկեր ու Ս. Ղազարն ալ տեսնել ուղած են և այս առթով զիս ալ փնտաւած են և կուզէին որ իրենց օգտակար ըլլամ: Հարկ եղած հայրենակցական պատիւն ըրի իրենց: Երկու օրէն պիտի մեկնէին: Այլևս չտեսայ ու կարծեցի թէ գացեր են:

Սակայն ատենք իմ երթեկներուս հետ մտնելով, կը դարանին: Բնակարանս երթալու համար շատ մեծ հրապարակէ մը կանցնիմ, նեղ փողոցէ մը մտնելով ու վերջէն նեղ փողոցէ մը դուրս ելնելով: Փետր. 21ի շաբաթ գիշեր ժամը 11½ին կը վերադառնայի տունս: Հրատարակչական քարտի էր: Եւրոպացիներուն Բարեկենդանի ըլլալով այն կողմերը ոչ ոք կար: Սրբ իմ փողոցս պիտի մտնէի, կանակէս իրարու ետեւէ րիվովէրի 3 պարթում լսեցի: Ետեւ գարձայ, ոչ ոք կար: Չանազան կողմերէ մարդիկ հասան: Չէի գիտեր թէ ի՞նչ եղած է: Եւ հաւ տեսայ որ գլխէս արիւն կը վազէր: Գնտալ մը գանկիս մէջ կողմէն մտնելով միւս կողմէն դուրս ելած էր և Չ գնտալ ալ ազգորներէս մտնելով դուրս ելած էին: Համագումար՝ 6 վերք: Ետևով հիւանդանոց տարուեցայ և հոն քննուելով, այն ատեն յայտնի եղաւ այդ ամէնը: Ինչ և է, վերաբոյժները հոս շատ լաւ դարման կը տանին ինծի և կը յուսան շուտով բժշկուել: Գնդակները ոսկորներուս դաւած չեն եղեր: Հագած զգեստներս և բուրդէ տեսակ մը հաստ գլխարկը զիս պահպանած էին:

Սրոջ կերպով չեմ գիտեր թէ որո՞նցմէ է հարուածը: Բայց ամէն անցքեր նկատողութեան առնելով, գրէթէ ստուգուած գիտեմ թէ ո՞վ ըրած է այս: Անձի մը հետ կենաց և մահու խնդիր մը կար: Դրամաշորթական գործի մը խնդիր է: Երկուքէս մէկը աներևութանաւ է ինք: Աւելի քան երկու տարի է Անգալիտի մէջ բացուած կալու, որ ստուծութիւններու շարք մըն է, արդէն նախապատրաստութիւն մըն է: Աւելորդ է ըսել որ Չ պանեանը այս դաւին մեղսակից չեմ նկատեր բնաւ: Գործիք մը եղած էր նա պարզապէս: Իր շահերն ալ կը պահանջէին իմ դէմս մաքառում մը:

Այս ամէնուն վրայ Հայ Հանդիսին մէջ թեթեւօրէն պիտի գրեն յառաջիկային: Վանքի հանրային շահերուն հետ սերտ առնչութիւն ունին: Բայց առ այժմ աւելի խորը պիտի չմտնեմ: Համբերելու եմ քիչ մը ևս:

Կը յուսամ թէ Հայ Հանդիսը քիչ օրէն կարող ըլլած հրատարակել արդէն շարուած պատրաստ էր մեծ մասամբ: »

ԱԶԳ. ՀԱՍՏԱ. ՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ
ՆՊԱՍՏՈՂ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ
Գրեգոր Սէրէպրէնիքով 24.000
րուբլի կտակած է վանի կրթական հաստատութիւններին: Այդ գումարի կէսը յատկացուած է վանի Սանդիստեան օրիորդական վարժարանին

և կէսն ալ վանի մէջ նոր բացուած կեդրոնական վարժարանին:

— Հանգուցեալ Տիկին Մաննիկ Տավուտեան կտակած է 200 օսմ. ոսկի խաղաղի Գալֆայեան որբանոցին և 200 օսմ. ոսկի Արմաշի դպրեվանքին:

— Հանգուցեալ Տիգրան Էփրէմեան որ բնիկ Չմիռնացի էր, նուէր ձգած է 1000 րուբլի Չմիռնի Ս. Մեսրոպեան վարժարանին և 1000 րուբլի Կպօլի Ս. Փրկչեան Հիւանդանոցին:

— Խորին ցաւով կիմանանք վանի կարագետ Եզեանցի քրոջ Օր. Աննա Եզեանցի մահը: Հանգուցեալը կարին կարմիր վանքին մէջ 50 օրք կը պահէր և ամէն տարի 250 ոսկի կը վճարէր Արբանոցին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք հետևեալները.

LES LUSIGNANS, par Armenag Azadian. Le Caire. Imprimerie S. Tarpinian. 1902. Prix: fr. 2.50.

(68 երեսէ բաղկացած այս պատկերազարդ տետրակի մէջ համառօտակի պատմուած է Լուսինեանների ազգաբանութիւնը, մանաւորապէս տեղեկութիւններ տրուելով Բարեգանակ իշխան Գուրիտի Լուսինեանի և իր եղբոր հոգեւոր խորհրէն Սպ. Լուսինեանի գործունէութեան և յարաբերութիւններին վրայ: Կը պարունակէ Խորհր. Սպ. ի մի քանի ընտիր բանաստեղծութիւններ Փրանսերէն թարգմանութիւնները և հայկական խնդիրն առթով 1899ին իշխան Գ. Լուսինեանէն մեծ պատմութիւններ զրկուած յայտարարութեան մը պատճէնը որ հրատարակուած էր ժամանակին Փրանսերէն թերթերին մէջ.)

ԴԱՍՏԻԱՐԱԿ անունով և 4 երեսէ բաղկացած նոր ամսաթերթ մը սկսած է շրտարակուիլ Երբանի մէջ: Յոգ թիւը միայն հասած լինելով մեզ, Ա. և Բ. թիւերը չենք տեսած որ իր նպատակի և ուղղութեան մասին յայտարարութիւնը կարդացած և որոշ գաղափար մը կազմած լինէինք: Յոգ թիւի խմբագրականէն կը հետեցունենք թէ նախորդ երկու թիւերը վիճաբանութեամբ կամ բազմաբով (polygraphie) տպուած կը լինին: Սոյն Յոգ թիւի մեծ մասը Ամերիկայեան Հայ յերին վերաբերեալ տեղեկութիւններ ու խորհրդածութիւններ կը պարունակէ, մաս մը ընդհանրական լուրեր և մաս մ'ալ ծանուցումներ:

Տարեկան բաժնորդագրին է Ամերիկայի Միացեալ Նահանգներին համար 50սէնդ. օտար երկիրներէ համար 3 Փր.: Հասցէն՝ Tasdiarag Publ. Co P. O. Box 330 CHICAGO III. (Etats-Unis d'Amérique)

ՀԱՅ ՈՐԵՐՈՒ ԲԱՐԵՐԱՐ ԱՌԵՒԱՆԳՈՒՄԸ. Հաւաքածոյ Որբանոցիս դէմ եղած յարձակմանց Տեսչութեան կողմէ տըրուած պատասխաններու: Լոնտոն. Տպարան Հայկական Որբանոցի, 2իկվէլ. 1903:

(Բրոք. Քուժայեանին Պարսկաստանէն և Ռուսիա պապատանած թիւրքիցի Հայերէն իր Որբանոցի համար բերել տուած 18 տղայներին Բարիքի մէջ վար դուրսիլ և յետոյ անոնցմէ 9ին միայն իրեն յանձնուիլը բուսական վիճաբանութիւնների ծնունդ տուած լինելով, Պատ. Թումայեանին իր պաշտպանողական համար գըրած յօդուածները կը պարունակէ այն տետրակ և հետեւապէս հետաքրքրական է

անոնց համար որոնք կուզեն այս թիւ մէջ երկու կողմն ալ լսել.)

ԹԻՖԼԻՉԻ ՌՈՒՍ ԵՒ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Թիֆլիզի «Տարագ» շաբաթաթերթի հրատարակած մէկ վիճակացող կիմանանք որ Թիֆլիզի Հայեր մանակէ մ'ի վեր սկսած են իր խմբագրական և հրատարակչական ժեր նուիրել ուսերէն լեզուով հրատարակութիւններ ընելու: Այս Թիֆլիսի մէջ հրատարակուող ուսերէն բոլոր թերթերը, բացի պաշտական «Կաւկազ» լրագրէն, Հայերն որ կը խմբագրեն ու կը հրատարակեն: Ահաւասիկ անոնց ցուցակը Արգոնաշ — Ռ. Յովհաննէսեան կաշկաւարի վիստակ — Գ. Միլիշարագէօզեան. Նովոյէ Արագուն — Իշխան Թումանեանց կղայրեան Սի. Խաղախաւոյա — Ա. Գալանթեան և խ. Խաչատրեանց. Տրոպ. Գ. Թամաշեան. Տիէֆոն — Ն. Գրգորեան:

Իսկ Թիֆլիսի հայերէն գրէթէ բոլոր թերթերն ալ գաւառացի Հայերն որ կը հրատարակեն այժմ հատ միայն կայ Թիֆլիսցի Հայ ալ քահանայ մ'է: Ահա ցանկը. Բիշո — Տ. Նազարեան (Շուշի) Լուսնայ — Գիւտ Ա. քհնյ. Աղան (Թիֆլիզի). Մշակ — Ա. Գալանթեան (Ագուլեցի). հրատարակչներ՝ Միլի Աղամալեան (Երևանցի) և Տիգրանեան (Ալեքսանդրապոլի), նոր հրատարակիչ «Մշակ» — Սարգս (Շուշիցի). Մոնթա — Սարգսեան (Շուշիցի). Նոր. Դար — Սպանդար (Շուշիցի). Տարագ — Տ. Նազարեան (Շուշիցի). Ազգագրական Հանդէս — Լալայեան (Ալեքսանդրապոլի) Թատրոն — Ա. Թարխանեան (Ալազրի): Ուրեմն Թիֆլիզի մէջ այս լոյս տեսնող 8 հայ պարբերական թերթերէն հինգի հրատարակչները Ղարաբաղցիներ են և մէկն ալ՝ Լուսնայ խոշոր գումար մը նպաստ տուած է Ղարաբաղի մէջ (հանգուցեալ Ա. Ղուկասեան 6000 րուբլի կտակած է անոր խմբագիր-հրատարակիչ քահանային):

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգներ Չիկո քաղաքէն վանցի Տիգրան Տիգրան Նալչաճեան ինչպէս անց տարի, այս տարի ևս 1 օրինակ Արմենիա նուիրեց Ռուսիայի Պապատարագ քաղաքի հայ վարժարանին:

ԱՆԳԼԻԱՅԻՆԵՐՆ ԱՐԱՐԻՒՆ ՄԵՋ

(Շար. 16րդ բուկն եւ վերջ)
Թէև իրենց դատողութիւն ու գրող կ. պօլսէն ընդունող պարզամիտ մտքերը սաստիկ պիտի հակառակին խօսքիս, սակայն ստոյգ է թէ Արթուրը բոլոր սրտով կատեն թիւրքերէ Բոլոր այն շէյխեր որոնք Հայէմի կ

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մակեղոնական նահանգներ (իւսթիւլ, Մանասթըր և Սէլանիկ) վարչական բարենորոգումներին համար Կ. պօլսի ուսուսական դեպտան Տ. Չինովիէֆէն և աւստրիական դեպտան Գարոն Գալիչէն փետր. 22ին Մեծ-Նպարքոսին յանձնուած ծրագիրը թէև շատ հասարակ բարենորոգումների պահանջներ կը ներկայացունէ, այնպէս որ սուլթանն ալ փութացած է ընդունիլ զանոնք, յայտարարելով թէ ինք ալ արդէն սկսած էր այդ կարգի բարենորոգումներ գործադրել, բայց ամէն հանգամանքերոյց կուտան որ նոյն իսկ այդ հասարակ բարենորոգումներ չպիտի կրնան գործադրուիլ Մակեղոնի մէջ որովհետև թիւրք կառավարութիւնը սրտանց չփափաքիր ուղղամտութեամբ գործադրել (թէև առերես հաճութիւնցոյց տայ) և Պուլկարներն ալ գործը ներկայ աստիճանին հասնելէն յետոյ՝ սին բարենորոգումների խոստումներով չեն գոհանար:

ԱՐՄԷՆԻԱ ԼԻՆՁԻ

Հեղինակի պատկերովն և ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տօնայեռնաւ: Գինը ճանապարհածախքով 3 ֆրանգ: Դիմել աշխատասիրողին 117, Godolphin Road, LONDON W.

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Ինչպէս ամեն լրագրողներ, Արմէհիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կուենան Արմէհիայի միջոցով մէկի դիմում աւել կամ մի քան յայտարարել, պատրաստ ենք ընդունել իրենց ծանուցումներ, ըստ լրագրական սովորութեան: Ծանուցումների գինըը նշանուած են Արմէհիայի ճակատը, առաջին վրայ հայտելով. 1 երկրորդի (աշխատի) համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ԱՐՏԱՍՏՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի մէջ այժման սուլթանին զէմ ապստամբական կռիւները կը շարունակուին: Թէև քանի մ'անգամ լուր ելաւ թէ գահին թեկնածուն կըռուին մէկ գերի բռնուած է, բայց ամէն անգամին ալ հերքուեցաւ յետոյ: Հետզհետէ գործն աւելի կը կնճոտի և կը դժուարանայ. սուլթանին զէմ ապստամբութեան կուսակիցները կը շատնան և կը դորանան: Չբանական կառավարութիւնն ստիպուած է Ալժէրի հարաւակողմը սահմանազլխին վրայ զօրքեր համախմբել:

Պրագլիւացի, անգլիացի և իտալացի զբոսաւորներ, Լոնտոնի «Տէլլի Մէլլի» հրատարակածին նայելով, զբըստ մը կազմեր են Պրագլիւաի սուրճի առևտուրը բոլորովին իրենց ձեռք անցունելու համար: Պրագլիւական կառավարութիւնն ալ այդ զբըստին պիտի աջակցի եղբը: Դրըստը մտադիր է եղբը սուրճերի գինը աւելցունել զէթ %ին 30:

ԱՆԵՔՈՒՆԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԷՆԻԱԿԱՆ ԲՈՒՆՈՒՄՆԵՐԻՆ

Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքին մէջ, Արմէհիայի բաժնորդագրուիլ փափաքողներին դիւրութեան համար կը ծանուցանենք որ մեր թերթի այդ տեղի գործակալութիւնը յանձն առած է Տիար Յարութիւն Ղազիկեան (Սարրաֆիլէֆոզոց, «Նոր Դար») կաթնակուծութիւններ ալ ծախու կը գտնուին իրեն մօտ միևնոյն գնով ինչ գնով որ կը ծախուին մեզ մօտ Մարտի մէջ:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախագրութեան համար 2 սանդիմ և 1 բոլորդի համար 1 սանդիմ: 3 անգամ գրուելիք ծանուցումի գինն վրայ %ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ գրուելիք ծանուցումի գինն վրայ 0/0ին 30 զեղչ: Սակարկութիւն չը՛ գուշակի:

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՆԵՆ ԱՆՆՈՒԱՆ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՂԼԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թե անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարքաների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է ոչ խարհէ: Գին 1 ֆրանգ:

ՇԵՔՐԻՐԻ ՀԱՄԼԷԴԸ

Շէքրիրի ՀԱՄԼԷԴԸ որ արևմուտեան աշխարհաբար լեզուով հայերէնի թարգմանած է քաջ անգլիագէտ Տիար Գարեգին Յ. Փափազեան, կարելի է ստանալ նաև Արմէհիայի խրմբագրատունէն:

Տպագրուած է վիեննայի Միխիթարեանց տպարանը, մաքուր թղթի վրայ և ունի մեծ ութածալ դիրքով 183+ԻՊ երես:

Գինն է 2 ֆրանգ և 50 սանթիմ:

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794-1894) ՇՈՐՅԵԼԻՆԻ ԳՍՏԿԵՐԸ

Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձին առթով 1894 թուականին հրատարակուած այս միաձալ դիրքով և լուսատիպ (phototypique) շքեղ պատկերի մեծութիւնն է 50x35 հարիւրորդամէթր և սպուած է 70x45 հարիւրորդամէթր քարտոնի (carton) վրայ այլ և այլ ընագրով: Մէջտեղը գրուած է հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն Գհնյ. Շմաւոնեանի, պատկերը և բոլորտեքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագրողները, անոնց զբէթէ ամենքի խմբագրապետների պատկերներովը:

Գինն է 4 ֆրանգ, ճանապարհածախքը մէկտեղ հաշուած. իսկ Պարսկաստանի համար 2 ֆրանգ և 50 սանթիմ:

Գալիլքեարեան Հ. Գ. — Պատմութիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը. Հատոր Ա. 1794-1860: Մէկ լուսատիպ պատկերով: Գինն է, ճանապարհածախքովը մէկտեղ, 2 ֆր. և 50 սնթմ.:

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛ գիրքը կարելի է ստանալ Արմէհիայի խմբագրատունէն, արժէքը կանխիկ ղրկելով:

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐՔՈՒՂԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայերեն ստիբական ստանաւորներէ մի քանիսն ամբողջուած են այս տետրակի մէջ իր-

բեւ նմոյշներ զանազան քաղաքներ մէջ և զանազան ապաւորութիւններէ առկա իւրերեքեք գրած ստանաւորներէ որոնք ժամանակին հրատարակուած չէին ինքնուրուած են այժմ: Այն մի քանի ստանաւորներ որոնք իրեք նմոյշ ամբողջուած են այս տետրակի մէջ, ցերեք ցան կը գտնուին Կ. Պօլսու պարագրուած ազգային երգարաններէ մէջ՝ որոց վերաբեր յապագութիւնն վաղուց արգէն արգելուած է, և Ասիոյ և Արմէհիայի լրագրողներէ մէջ: Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ աւրուած են նաեւ թէ այդ ստանաւորներին յապաւորութիւններէ առկա ներշնչուած են նաեւ թէ այդ ստանաւորներէն շուրջ գրուած են: Գին 15 սանթիմ:

Մ. ՓՈՐՔՈՒՂԱԼԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐՔՈՒՂԱԼԵԱՆԻ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր շնորհ կը լինի Պարսկաստանի Հայերէն համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներով:

- Ա. ՀԱՅ ԳԻՒՑԱԶՆՈՒՂԻ ՄԸ (Մպառուած) Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ Գ. ՄԱՂՄՈՍ ԽՈՐԱԹԵԼԻ Դ. ԵԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐՈՑ ԵՒ ԿԵՆՏՐՆԵՆԻ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՏԱՄ. ՈԱՊԵՏԱՑ (Սպառուած) Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՒՆԵՐԸ. (Հայաստանից ներկայացուած պատկերներ առուրը հեռեւեալներն սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ. Զ. ԳԱՄԱԻ ԳԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԵՒ ԱՅՐԵԿԵՏԵՑ ԱՍԱՐՈՒՆԵՑ (Սպառուած) Է. ԼԻՆՁԻ ՕՐԷՆՔԸ ՏԱԶԿԱՀԱՅԱՍՏԱՆԻՄ. (Սպառուած)

- Ը. ԹԻՒՐԿԻԱԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԳՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիայի Հայերէն և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ: Թիւրքահայաստանի մէջ բնակուող այլ և այլ ազգերէ բնակիչներէ թուին բազմաառական մէջ ցուցակի: Կցուած է տետրակին վերջը:) Գին 50 սանթիմ (35 սանթիմ):

Մ. ՓՈՐՔՈՒՂԱԼԵԱՆԻ ՇՈՐՅԵԼԻՆԻ ԳՍՏԿԵՐԸ

Մ. Փորթուգալեանի գրած ստանաւորներէ մի քանիսն ամբողջուած են այս տետրակի մէջ իրերէն շուրջ գրուած են: Գին 15 սանթիմ:

Մ. Փորթուգալեանի գրած ստանաւորներէ մի քանիսն ամբողջուած են այս տետրակի մէջ իրերէն շուրջ գրուած են: Գին 15 սանթիմ:

ՏՆՕՐԷՆ—ԻՄԱՍԻՐ

Մ. ՓՈՐՔՈՒՂԱԼԵԱՆԻ Մ. ՓՈՐՔՈՒՂԱԼԵԱՆԻ Զայեքն ապարմ Մ. Փորթուգալեանի Le Gérant: François CARRIERE Marseille. — Imprimerie du Midi